

ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԻՆ

Ե . ԲՈՐՈՍԵԱՆ

Նամակ կամ որ եւ է

գրութիւն պէտք է ուղղել առ

Տնօրին . ԱՐՇԱՒԱՅՈՍ ջրագրի ԳԱԶԻՐԷ (Նսս Նսկաստայի)

Թիւ .


E. TOROSSIAN

Dirac. propr. du journal arménien

ARCHAËLOUICE

LE CAIRE (EGYPTE)

Boite Postale No.



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դահիւն .	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան ծրակի	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՈՒԹԻՒՆԻ ԿԱՆՆԻԿ Եւ թղթատարի ծախքը Խնրագրութեան վրայ է :

Խնրագրութեան ուղղուած գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ Կանխիկ վճարելի են

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՈՒԹԻՒՆ ԱՐՇԱՒԱՅՈՍ

Բ - ՏԱՐԻՈՅ

Արշալոյսի Տնօրինութիւնը միևնոյն հաստատմանութեամբ պիտի շարունակէ իր ԵՐԿԻՐՆԵՐ ՏԱՐԻՆ . և այդ իրաւունք կուտայ իրեն , բանալ Երկրորդ տարւոյ բաժանորդագրութիւնը :

Արշալոյսի ծախսին ընդարձակման և այլ բարեփոխութեանց համար պիտի ըստ պատենք ժամանակ մը , մինչեւ որ այդ փոփոխութիւնները ընել կարենալու համար ապագայում պէտքերը մեզ համին :

Գահիրէի համար Արշալոյսի տարեկան բաժանորդագիրը զեղծելու փոխարէն նոյնը պիտի պահենք և այդ փոքրիկ տարբերութիւնը պիտի հատուցանենք ամեն բաժանորդի ձրի զրկելով Թիֆլիսէն օրինակ մը , որ մամուլ տակ է և 200 ի մօտ էլ յերէ պիտի բաղկանայ :

ԾԱԿ ՍԱ ՓՈՐԸ

Հեղինակութեան և մինչև իսկ արդար բարկութեան կը մղուի մարդ . երբ կը հանդիպի կարգ մը մարդկանց կամ մարմիններու , որք կը ձգտին ճշմարտութիւնը իրենց սիրած գոյներով հրապարակել :

Ո՛րք ինչպիսի շուտով կարելի է լուծուի գտնայ՝ երբ իրմով հետաքրքրուողները իրաւունքի ու պարտաճանաչութեան մօտ ապրիլ ուզեն , մտնալով Նսր՝ դիմեն միայն հանձնար կարելի պիտի ըլլայ գտնել հանրութեան իրական օգուտը բարին ու լաւագոյն յենակէտը : Ուրիշ կերպ՝ ամեն բողոք , ամեն խօսք ու գրուածք ապարդիւն մնալով տեղի կ'ուտան շարք մը տհաճելի բարդութիւններու :

Հիմայ՝ Գահիրէի հայ հասարակութեան ուշագրութեանը արժանացած այն ինչպիսիք , որք կը ծեծուի ստենէ մը ի վեր , գեռ այն ուղիին մէջ չ'է գրուած , ուրիշ զուտ բարիք ապաստի հասարակութեան համար :

Լսարան-Ընթերցատուն ունենալը գեռ երազ է մեզի համար , ինչպէս երազ էր մէկ տարի առաջ : —

Ինչո՞ւ :

Ա . Որովհետև գործադիր ժողովոյ ան-

գամք իրարմէ աւելի անգործնական մարդիկ են :

Բ . Յարգ հաւաքուած գրամը նոր-Որի ուղղութիւն գնաց :

Գ . Ընկերութեան անդամները երբ կը նկատեն թէ , իրենց իրաւունքը բռնաբարուած է՝ չեն ուղեր այլևս նոր վճարումներ ընել :

Դ . Նոր-Որի հասոյթները հին օրերու մէջ հաւաքուած գրամին զլուխը ուտելէն վերջ՝ բաց ալ մնաց :

Ե . Ընկերութեան անդամակցելու նոր փափաքողներն ևս ետ կը փախչին . խորհուրդ որ իրենց քիչէ շատէ տուածը ծակ աւարտիլն մէջ ձգուելու է . և այլն և այլն :

— Ի՞նչ աստիք չ'բաւեր Գործ . ժողովը կը համարձակի գտնուած անդամներու մէկ որոշ մասն ալ ցրուել , զէնք ունենալով հիմնական կանոնագրի Նրդ յօդուածը և ներքին կանոնի 14րդ . յօդուածը :

Մի՞թէ բոլոր անդամներն ալ կոյր կ'ենթագրուին :

Գործ . Ժողովոյ գործունէութեան դէմ իրաւացի բողոքներ երեւցին . հետեւաբար այդ մարմինը ամբաստանուած է՝ Ընդհ . Ժողովոյ առջև : Թող նախ ինքզինքը արդարացիէ՝ և ապա՝ նոր գտնուածներու կամ ընկերներ հեռացնելու մասին մտածէ : Ամեն ոք ազատ կամք արձանագրուեցաւ . հազուադէպ է որ , չնչին գուճար մը չ'վճարող գտնուի : Անդամներու բարի կամեցողութիւնը մեծաւ մասամբ կապ ունի գործող տարրին աշխատութեանց եղանակին հետ :

Ուստի՝ իրաց այս վիճակին մէջ տարեկան հաշիւ կարգադրելու արտօնուակաւ այս կամ այն անդամին վերջին դիմումը ընելը արդարացի և գործնական ալ չ'է :

Բռնի վստահութիւն չ'է կարելի պահանջել . հարկը օրէնքը կը լուծէ . մանաւանդ չ'վարեւաջուած օրէնքը :

Եթէ վախ չ'կայ՝ ընդհանուր ժողովոյ դռները բաց ըլլալու են ժողովրդի առաջ . և թէ՛ բոլոր դիւրութիւններն ընծայել պէտք է նոր անդամներ ունենալու համար :

Նոր-Որ իր խոստման հաւատարիմ է . օրրտորէ ճոխ նիւթելով կը փայլի . կ'երեկ թէ Սասնոյ մէջ ալ թղթակից ունի (°) :

19 համարի օրուան լուրերու բաժնին մէջ կը կարդանք : « Կիւնսեանք թէ՛ Սասնոնի Հայերը տեղական իշխանութեանց վարմունքին գրգռուած՝ շարժում մը կը պատրասեն : Բայց շատ անպատեհ է վաշիկեանք

բանի որ տեղափոխուողը քաղաքում են Զինական գործերուն մէջ »

— Համեմատաբար եգիպտոսի պէս ազատ երկրի մը մէջ՝ կը կարգանք հայ թերթէ մը այս լուրը . եթէ կարելի է լուրը սել . . . . .

Ինչ զգալի փոփոխութիւն այն օրէն երբ ինքնագոյ Ս . Բիւրատ ուղղակի պատասխանատու-Իմրագիր յայտարարուեցաւ :

Եթէ Սասնոյ այս պատրաստութեան լուրը ընթերցողներէն առաջ Սուլթան Համիտը իմանար՝ ի հարկէ հայտարար պիտի վարձատրէր իր հաւատարիմ ռաշխան . Եւ մեր « Տիրէ թէ՛ Եօր Թօլիթիք » ի գրութիւնը միթէ խոչոր ապացոյց մը չ'է՞ այն անձնուէր ծառայութեանց՝ զորս մեծահօգի կերպով կը նուիրէ , ինչպէս ինքը անուանած է , կեղծոտ հայ ազգին :

Ի դէպ է հոս հարցնել թէ՛ ովքեր պիտի ամչնան Գործ . ժողովոյ անդամներուն համար :

ՄԱՐԿԱՐ ԳԱՅԱՆԱՆ

ՈՒՄՈՒՐՔՈ ՔԱԳԱՌՈՒՆ

ՄԱՆՆՈՒԹԵԱՆ ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եւրոպական թերթերը հետեւեալ մանրամասնութիւնները կուտան , Ունկերքո քաղաքին վրայ ի գործ դրուած սպաննութեան մասին , որը ամբողջ Իսպիան սուզով պատեց :

Թագաւորը՝ Արքունեաց նախարար Բոնիօ Վալիա զօրավարին եւ մարմնամարդական դաշտին Տնօրէն զօրավար Ավոկատրօ Տի Գուիթիթի ընկերակցութեամբ պալատէն դուրս ելաք առաւտուն ժամը 8 1)2 ին :

Ճամբուն վրայ բազմութիւնը խռնուած էր . 2000 ի մօտ մարդիկ զինքը կ'ապասէին . վերնատունները լեկ լեցուն էին երկու սուէ խուռն բազմութեամբ մը :

Թագաւորը ունկնդրեց արտասանուած ճանքեր և ըստ սովորութեան յաղթողներուն մըրցանակները ինք բաշխեց . իւրաքանչիւրին տիրալիր և զրուատական թօսքեր ուղղելով . ու քաղցրութեամբ կը խօսակցէր ներկայ գտնուող իշխանութեանց հետ :

Հանդէսէն յետոյ մարմնամարդական խումբը բարեւ ի կենալով զէնքերը ներկայացուց և արքայն զլսարկը հանելով պատասխանեց ուննց :

Թագաւորը տեսնելով հագած էր և զլանաձեւ երկար զլխարկ մը կը կրէր :

Արքայական բեմէն ելնելով , Արմատական Երեսփոխան Պ . Բէննաթիթ ըսաւ :

« Հիմա ծեր եմ . բայց շատ կը նախանձիմ այս աշխոյժ երթասարգներուն վրայ . ժամանակ

մը ես ալ մարմնամարզը չափազանց կը սիրէի » : Այս ըսելով՝ Բօնցիօ-Վալիա եւ Ալօօկատրօ գորավարներուն հետ կառք նստաւ : Արքայական կառքին ձախ կողմը կը գտնուէր Պորտուգալի : որ Գարսալիակիր ոստիկաններու սեղան կայն է :

Նուագարուածը թրքայական քայլերգը նուագեց եւ « կեցցէ՛ Արքայն » ի ազդակը սմին կուրծքերէ դուրս թռաւ :

Մինչդեռ ձիերը ցնծութեան ազդակներէն գրգռուած կը դոփէին, երիտասարդ մը՝ երեսուն տարեկանի մօտ, կարծահասակ, տեգոյն, գիրուկ, կառքին մօտեցաւ, ուր թագաւորը դեռ ստաքի վրայ ժողովրդեան բարեկերուս կը պատասխանէր :

Անձանօթը կառքին աջակողմեան պատուանդանին մօտեցաւ եւ նշան առնելով՝ թագաւորին վրայ պարպեց ընկձուկէրի երեք հարուածներ, որոնք շատ որոշ լուեցան :

Վեհապետը տապալեցաւ եւ կառքին բարձրուն վրայ ինկաւ : մինչդեռ կատարողը ուժգին կը մտրակէր ձիերը :

Կառքը անցաւ հոծ բողմութեան մէջէն փոշիի ամպ մը բարձրացնելով :

Այս բոլորը մէկ վայրկեանի մէջ տնցաւ :

Ըմբռնվարժներէն մին, որ մէկ երկու քայլ անդին կը գտնուէր, վազեց եւ բռունցքի հարուածով մը գետին տապալեց արքայապանը :

Ոստիկաններու յիսնապետը Սարիսթօրէ եւ բոլոր ոստիկանները՝ շրջապատեցին անձանօթը որ բռուն ձիերը կ'ընէր եւ նոյն իսկ յաջողեցաւ պատուել զինքուրի մը համազգեստը :

Վերջապէս ամուր մը կապուեցաւ եւ զըրուեցաւ կասպաբէթի անուն արձևատուորի մը կառքին մէջ, մինչդեռ բարկացած ամբողջ վայրկեանապէս կ'ուզէր միեւնոյն տեղը իր ձեռքով մարգապանին վրայ արգարութիւնը ի գործ դնել :

Մէկ քանի ըմբռնվարժներ, իրենց գաւազանները ձօճելով ջանացին նետուի թշուաւականին վրայ, զայն տեղն ի տեղը սպաննելու համար :

Նոյն պահուն թագաւորը արքանիքը կը հասնէր :

Շատ տեգոյն էր եւ ցաւապէս հեծնմանքներ կը հաներ : զժբազգ վեհապետը հոգին սուսնդեց ճիշտ այն ատեն՝ երբ կառքը պարսիկին վարձակազուռէն կ'անցնէր :

Գննիչ Կալէացցի ասպետը, որ հանգուցեալ թագաւորին կը հետեւէր եւ որ սպաննութեան պահուն կառքին մօտ կը գտնուէր, ողբերգական պատահարին իրիկունը հրատարակուած քանի մը անձնիշտ լուրերը ուղղեց :

« Թագաւորը ըստածին չտի զուարթ չ'էր, բնականապէս տկար, բայց ոչ անտեսանելի արտաթիւն մը իր դէմքը պատած էր եւ ինչպէս գիտենք, արքայական բեմէն իջնելով, ձախ կողմէն իր կառքը նստաւ » :

« Շատ ուրախ եմ, լսաւ, այսպիսի սիրուն հանդիսի մը ներկայ գտնուելուս » իր կառքին մէջ դեռ ստաքի վրայ էր, երբ Պրէսի իրարու հետեւէ երեք հարուածները ուղղեց :

« Թագաւորը կողմնակի ինկաւ Բօնցիօ-Վալիա գորավարին վրայ, որ իրենքով նստած էր եւ իր սպաննիչն ա'յնպէս անարկու, ա'յնպէս խոր նայուածք մը նետեց, որ շատերը սոսկազին » : այդ նայուածքը անմոռանալի է, լսած է կալէացցիը :

Երկրորդ եւ երրորդ հարուածին մէջ տեղը թագաւորը մարելով իյնալու վրայ էր, երբ Բօնցիօ Վալիա գորավարը նշմարեց եւ գոչեց :

— Վեհապետ տէ՛ր :

Թագաւորը պտտասխանեց :

— Ոչ ինչ, կարծեմ բան մը չէ :

Ոստիկանական պահականցին մէջ Չէն-նոքթի Ամբրիօ ոստիկանը առաջինը եղաւ որ նետուեցաւ արքայապանին վրայ՝ ըսելով :

— Թագաւորը սպաննեցի՛ր . . . վա՛ս :

— Ո՛չ, պատասխանեց Պրէսի, վատ եղած կ'ըլլայի, եթէ չ'սպաննէի :

— Բայց փախչիլ փորձեցիր :

— Ա՛հ, այ՛ո, եթէ կարենայի, յօժարակամ կը փախչի :

— Անիշխանակա՞ն էս :

— Շատ մը քաղաքական ընկերութեանց կը պատկանիմ. բայց ո՛չ մէկը իմ գաղափարներու համաձայն է :

Ապա մարդասպանը արհամարհոտ լուծիւն մը պահեց. քիչ ին վրայ ծանր վէրք մը ստացած էր, ըմբռնվարժի մը ձեռքէն :

ԹԱԳՈՒՀԻՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԸ

Մինչդեռ այս անգիլի ոճիւրը կատարուած էր, թագուհին մեծ ընդունելութիւն մը կ'ընէր. շուտով իրեն իմաց արուեցաւ որ թագաւորը անհանգիստ էր :

Թագուհին գժբազգութիւն մը պուշակեց սոսկումի եւ զարհուրանքի ենթակայ. եւ շուտօրոյ յալատին մեծ սանդուխներէն վար վազեց :

Թագաւորին մարմինը գետնայարկի սրահներէն մէկուն մէջ մահճի մը վրայ դրուած էր. եւ անոր շուրջը համախմբուած էին Տր. Սալիօ, Տր. Էրպա, Գեր-Գաւառապետ եւ Մօնձայի հիւանդանոցին ստալին վերաբոյժ, Տր. Վէրչէլի :

Թագուհին շուտով հասկացաւ իրեն պատահած սոսկալի աղէտը. երբ թագաւորը տեսաւ աչքերը անարած, անշունչ, սուր ճիչ մը արձակեց եւ մարգ թիչիներուն դռնաւարով :

— Վերաւորուած է, վերաւորուած է, ա՛հ ազատեցէ՛ք զինքը ի սէր Աստուծոյ :

Եւ լալով ու հեծկաւարով, իր կողակցին համար զգացած ցաւերուն մէջ հրաշալի, բիչիկներուն կը պազատէր : Աւա՛ղ, որ պետի տարուէին բռնութեամբ դուրս հանել զինքը հաստակու համար թէ թագաւորը մեռած էր :

Գիտիլը բոլորովին մեղադրեցին. երեք վէրքեր կ'երեւային. մէկը սրտին ծայրը՝ խորչին մէջ մխուած, մէկը ձախ անրակին մօտ եւ երրորդը՝ գէպի աջ բազկային գիծը եւ ուտերը երկարող հիւսկերորդ եւ վեցերորդ կողակցին մօտ :

Վէրքերէն արեւն կը հոսէր բայց քիչ քանակութեամբ :

Թիչիկները վէրքերը լուացին, մարմինը անկողնոյ մը վրայ գետեղեցին եւ չապիկ մը հագցնելով պատանքով պատեցին. մինչդեռ վեց խոչոր կերտներ անկողնին շուրջը կը վառէին : Նոյն վայրկեանին թագուհին կրկին երեւցաւ վերարկուով մը ծածկուած, տեսարանը անսելի եւ խորապէս յուզիչ էր : Բոլորն ալ ծնրապիւր կ'աղօթէին :

Սակաւ ինչ յետոյ ներս մտան Գեր. Մօսի, Մօնձայի տաղերեցը. Գեր. Պէրնանի եւ Սանթա Ալլա Սթրատայի վարդապետը :

Թագուհին ցաւի եւ սազնապի վայրկեանի մը մէջ ծունկերուն վրայ յատկանալով գիւկին մօտեցաւ եւ ձեռնամու՛ճ հեծնմանքներէ խեղճուած ձայնով մը լալակին գոչեց :

— Ա՛յնչ սի բարի էիր. մարդու մը վնաս բած չէիր ու քեզ սպաննեցին. ո՛հ. ա՛հ դարուս ամենամեծ ոճիրը :

Մարկէրիթա թագուհին վերջապէս իր սենեակներէն մին տարուեցաւ, բայց միշտ կ'ուզէր վերադառնալ եւ աղօթել գիւկին մօտ :

Սգալուք սենեկին մէջ կային Բօնցիօ-Վալիա գորավարը, ուրիշ սպաներ, Տր. Էրպա եւ Տր. Վէրչէլի, որոնք թաղածալեց կուլային :

Ապա գիւկը ծածկուեցաւ պալատի պարտէզէն քաղուած թարմ ծաղիկներով. քիչ մը հոքը թագաւորին մարմինը իր սենեակը անկողնին վրայ տարուեցաւ :

Այն ատեն սպաննութեան լուրը հեռագրուեցաւ բոլոր արքայական իշխաններուն եւ բոլոր արքունիքներուն :

ՆԱԲՈՒԻ ԻՇԽԱՆԻՆ ԻՄԱՑ ՏՐՈՒԻԸ

Սպաննութեան իրիկունը իսկ ծովային նախարարութիւնը Աթէնքի Իտալական դեսպանատան հեռագրեց, հասկնալու համար թէ նաբոյի Իշխանին Երազ քրօսանաւը գեռ Բիբէս՝ կը գտնուէր :

Թորբէլանաւ մը զրկուեցաւ Մեսինայի նեղուցը Երազ ի գալատեան սպասելու համար :

Հետեւեալ օրը քրօսանաւը կ'երեւար ծովը :

գերքէն եւ Գար-Տարմիի ծովեզրքի հեռագրով (Ահնալ ր) սոսկալի լուրը իմաց արուեցաւ Արքայական իշխանին :

Նշանացի պատասխանով մը յայտնի եղաւ որ գուր հասկցուած էր նաւուն մէջ, եւ Երազ քրօսանաւը դէպի Պրինսիպի ուղղուեցաւ :

ՆՇԱՆԱՔՕՍՈՒՓԻՆ

Հինգշաբթի երեկոյ Տիար Գառնիկ Թու մատանի ընակարանին մէջ, ի ներկայութեան երկու կողմանց ազգականաց եւ բարեկամաց, ինչպէս նաեւ կլիբր գասուն, կատարուեցաւ նշանախօսութեան հանդէսը իւր քրոյ :

ՕՐ . ԱՐՏԵՄԻՍ ԹՈՒՄԱՆԱՆԻ ԸՆԳ ՏԻՍՐ ԳԱՌՆԻԿ ՍԻՐՈՒՆԵԱՆԻ .

Օր. Արտեմիս Զմիւռնիոյ առաջնակարգ գերգաստաններէն միոյն կը պատկանի եւ ընական է թէ՛ իւր ծննդավայրին մէջ ըստացած է այն վարդացումը, որոյ շնորհիւ Զմիւռնիացի օրիորդները ամեն տեղերու իրենց սեռակիցներէն գերիվեր կը դասուին :

Տիար Գառնիկ Սիրոնեան կանոնաւոր ուսում ստացած, երբեմն Պօլսոյ իսկ այժմ Գառնիկի ուսուցչական շրջանակներուն մէջ ամենէն կարեւոր տեղը գրուած է. լուրջ, լեզուազէս եւ միանգամայն պարկեշտ երիտասարդներու դասուն կը պատկանի :

Մեր անկեղծ շնորհաւորութիւնները թէ՛ խօսեցեալներուն եւ թէ՛ զանոնք շրջապատակներուն :

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

Լ'առնենիի մէջ կը կարգանք :

Գու՛մ-Գարուի պատրիարքարանը 25 Օսմանեան սակի զրկած էր Տիարպէքիի բանտարկեալներուն բաշխուելու համար, ըստ Նոր-Վեւեմի, Խալիթ պէյ արտօնած չէ այս ողորմութեան բաշխումը, պատճառաւանելով օսմանեան բանտերու կանոնադրին մէկ տրամադրութիւնը, որ կ'արգիլէ իւրաքանչիւր բանտարկեալի 25 դահեկանէն աւելի գումար մը ունենալը :

Տիկին Յ. Պէրպէրեան Տիկնանց Գործոյ եւ Հաստատութեանց պաշտօնական մոզովին ներկայացուցած է երկար եւ կարեւոր տեղեկագիր մը, հայ կնոջ վիճակին վրայ : Տեղեկագիրը յէ տուաւ Տր Պաւլ թերթը հրատարակած է իր 1 եւ 15 Յունիս թիւերովը : Տիկին Պէրպէրեան հաւատարմօրէն նկարագրած է հայ կանանց վիճակը Թուրքիոյ մէջ եւ քաջութիւնը ունեցած է ժողովին յիշեցնելու հայկական շարքերը «որովայն հաստուած յղի կիները» որոնց սաղմերը սուկններու ծայրը անցուած պտտուեցան փողոցներու մէջ. թուրք զինուորներու եւ թափառական քրիտերու բաշխուած եւ ըռնարարուած կիները : Զինուորները զանոնք բոլոր աներեակայելի թշնամանքներով ծածկելէ յետոյ, կը հրացանն իսկ ճերը անոնց ստորին որովայնէն պարպելով իրենց հրացանները եւ գնդակները գտնուեն զուրո հանելով. » հրեշայի՛ն զրօսանք : —Օր. Ալիս Սթըն Պլէքուէլ հրատարակած է « Զայն Հայրենեաց ի մէջ Միհրան Տաւմատեանի « Բանտարկեալ յեղափոխական » ի անգլիերէն թարգմանութիւնը :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՎՐԻՊԱԿ
Գրաչարական վրիպակ մը՝ Արշալույսի 97
թուով հրատարակուած մեր Պ. Պ. ին « Ինչ
անուն տանք » վերնագրով յօդուածին իմաստը
փոփոխած է . ուստի պէտք է կարգաւ նոյն թուոյն
Բրդ . երես առաջին սիւնակի վարէն հաշուելով
13րդ . տողը հետեւեալ կերպով :

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Թիէնիին 7 Օգոստոս . — 16,000 գաշ-
նակիցներ Բէյքանիկ վրայ յարձակած են այ-
սօր արշալույսին և Չինացիները վանած են
իրենց պատնէշներէն . պատերազմը կը շա-
րունակուի :

Բարիկ 7 Օգոստոս . — Տելքասէ յայ-
տարարած է նախարարաց ժողովին թէ՛ ո՛ր
է հեռագիր մը կարծել չ'տար թէ դաշնակ-
ցաց յառաջնադասութիւնը որոշուած է :

Եւ ոչ մէկ կառավարութիւն ըւր ըս-
տացած է :

Բարիկ 7 Օգոստոս . — Տամատ Մահ-
մուտ փաշա , Սուլթանին քեռայրը և իր
տղաքը շուտով Չուիցերիաէն պիտի մեկ-
նին դէպի Եգիպտոս իրենց հայրենեաց բա-
րեկարգութեան գիտաւորութիւնները շա-
րունակելու համար :

Լոնտոն 9 Օգոստոս . — Բէյքանիկէ մէջ
Օգոստոս 5 ին տեղի ունեցած պատերազ-
մին մէջ Ռուսները 500 հոգի կորսնցուցած
են , Անգլիացիք 50 . Գերմանները և ճաբոն-
ցիները նմանապէս ծանր կորուստներ կրած
են : դաշնակիցները եանցունիկ վրայ կը
քալեն :

Բարիկ 9 Օգոստոս . — Պ . Բիշօնի մէկ
հեռագիրը կ'իմացնէ թէ՛ գետպանտուննե-
րը ապաստանած 800 Եւրոպացիներէն զատ
3,000 տեղացի քրիստոնեաներ կան , որոնք
չ'են կրնար լքել որ շարգուին :

Ս . Բէթերսպուրկ 9 Օգոստոս .
— Ռուսները փայլուն և կրկնակի յաղթու-
թիւններ տարած են Չինացւոց վրայ , Ա-
մուր նահանգին մէջ . զօրավար մը և բազ-
մաթիւ սպաներ գերի բռնած են :

Լոնտոն 9 Օգոստոս . — Լորտ Ռո-
պըրթս կը հեռագրէ թէ՛ Պօէրները գերի
բռնուած են Էլանդս-Բիվրի Անգլիական պա-
հակախումբը՝ որ կը բաղկանար 300 հոգիէ :
Վանտէրքրոնի մօտ կուի մը տեղի ունե-
ցած է Չորավար Տր Վէթէ և զօր . Մէթու-
ընի մէջտեղ առաջինը Վասալ գետէն
անցած է Թրանսալպի հողը :

Լոնտոն 9 Օգոստոս . — Չորավար Պիւլը
Ամերսֆորթը գրաւած է ամսոյս 7 ին , և
զօրեղ զիրքէ մը վռնուած է Գրիսթիան Պօ-
թան և չորս գումարտակներ :

Բրէթօրիա 9 Օգոստոս . — Չորավար Եան
Համիլթընի մերձեցումը լսելով , զօրավար
Տըլարէյ Ռիւսթէնպուրկի պաշարումը վեր-
ցուցած է , ապա զօրավար Գարէնիթընէն
խուսափելով Էլանդս-Բիվրի կղզիացած պա-
հակախումբը բռնած է որ կը բաղկանար 300
Պիւլմաններէ և Ռօսէչեաներէ :

Հինգշաբթի առաւօտ փամբ 9 ին արտա-
կարգ շքեղութեամբ հողահանգստեան պաշ-
տօն կատարուեցաւ , Ն . Վեհ . Ումպէրթօ
Թագաւորին համար :

Իտալական ընդհ . հիւպատոս , Պ . Թու-
ճինի , համազգեստով ներկայ էր , շրջապատ-
ուած հիւպատոսարանի բոլոր պաշտօնեա-
ներով :

Ն . Բ . Խոթիլին կողմէ ներկայ էր Ա-
րարողապետ Հասան փաշա Ասրմ :

Հիւպատոսական մարմինը , Գահիրէ դա-
նուող նախարարները և այլ բարձրաստիճան
անձնաւորութիւնք ներկայ էին հանդէսին :

Եկեղեցւոյն մէջ խուռն բազմութիւն
կային երկու սեռէ , խորանին առջև շքեղ
մահաբեմ մը բարձրացած էր , որուն վրայ
զետեղուած էր Իտալական Գրօշակը և ար-
քայական թագ մը :

Նուագախումբը կտորներ նուագեց և
եկեղեցական երգեցողութիւններ կատար-
ուեցան :

Կարգապահութիւնը կատարեալ էր :

Իտալական բոլոր հաստատութիւնները
նոյն օրը գոց էին :

— Աղէքսանդրիոյ մէջ հանգանակու-
թիւն մը բացուած , Ումպէրթօ Թագաւորին
գերեզմանին վրայ անագապղնձէ պսակ մը
դնելու համար :

Պսակը սեպտ . 20 ին Հոովմ պիտի դր-
կուի յատուկ պատուիրակութեան մը միջո-
ցաւ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՔԻԱ

Մէկ քանի շրջանակներու մէջ Սուլ-
թանը համոզելու փորձեր եղած են , որ-
պէսզի ետ առնէ Գրուբի տան 8 զրահա-
ւորներու համար ըրած ապսպրանքը և շա-
նացած են , զանոնք պատրաստել տալ Անգ-
լիական Ամթրոնկ տան , որուն ծախքի
հաշիւը Գրուբի տան ներկայացուցած ծախ-
քէն 88,000 ոսկի պակաս է :

Կ'ըսուի թէ՛ Սուլթանը կ'երկնչի այս
խնդրոյ առթիւ Գերմանիոյ Կայսեր սիրար
ցաւցնելէ , որովհետեւ արդէն անոր միջա-
մտութեամբ Գրուբի տունը հաւանած է
117,000 Օսմ . ոսկույ զեղջ մը ընել :

Նախարարները Երլտըզ հաւաքուելով
մասնաւորապէս զբաղած են այս խնդրով :

Եթէ քաղաքագիտական զօրաւոր ազ-
դեցութիւն մը չ'ըլլայ , բացորոշ է որ Գր-
ուբի տունը յաղթանակը պիտի տանի :

— Չարը « ճերմակ առիւծի » պատուա-
նշանը շնորհած է Սուրիոյ նորընտիր կուսա-
կալ Նազիի ( ) փաշայի :

ԹՈՒՐԻՔԻԱՅ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ . — Մեծ
պետութիւն մը՝ կ'ըսեն թէ Ռուսիան ա-
ռաջարկած է Սուլթանին 3000 տուճկական
զօրք զրկել ի Չինաստան :

ՊԻԷՍՍԻԻ ԿԻՆԸ . — Խուզարկութիւն մը
կատարուած է ի Ռեւսթ-Հօպօքըն (Միացեալ
Նահանգ) Տիկին Սօֆի Պրէսսի տունը , որ
կը կարծեն թէ Ումպէրթօ Թագաւորին ըս-
պանիլին կ'ենը ըլլայ :

Այս կինը շատ ահաբեկած է , ըսյց իր
և իր ամուսնոյն ո՛րէ՛ դաւադրութեան մը
խառնուած ըլլալը հաստատող բան մը գը-
տած չեն :

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԸՆԹԱՑԻՐ .

— Ընկերվարականներու օրկան Ալվանթի լը-
րապիրը յայտարարած է որ միայն ընկեր-
վարականներն են որ կը ցաւին Թագաւո-
րին մահուանը վրայ :

Լապիրը կ'ըսէ թէ՛ սպանման միակ
ճշմարիտ պատասխանատուն Բէլլու զօրա-
վայն է և կ'սպառնայ արդի նախարարին
Արուլիոյ մէջ ծագելիք ապստամբութեան
մը լուրովը :

Ալվանթի ի այս թիւը բռնուած ըլլա-
լով առաջինին նման երկրորդ տպագրու-
թիւն մը հրատարակուած է :

Բաղմաթիւ միապետական զգացումնե-
րով տողորուած գործաւորներ լրագրին
Խմբագրատան առջև եկած և ցոյցեր ըրած
են . քանի մը ընկերվարականներ ամբողջէն
խոշտանգուած են :

ԹՐԱՆՍՎԱՆ

ԹՐԱՆՍՎԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ . — Անգղիա-
կան լրագիրները ամենակծու դժգոհու-
թիւն մը կը ցնեն ոչ զօրավար Հընթըր մի-
այն մէկ թնդանօթ բռնած է և թէ զօրավար
Օլիվիէն կրցած է պիտի իր բոլոր թնդա-
նօթներովը :

Մօրիկնի բռնք դիտել կուտայ թէ Պօ-
էրները ամենէն քիչը հարիւր հատ խոշոր
թնդանօթներ ունէին , 20 հատ մ'ալ Անգ-
ղիացիներէն առին , մինչդեռ պատերազմին
սկզբնաւորութենէն ի վեր Անգլիացիները 5
կամ 6 հատ Պօէր թնդանօթներ առած են ,
ինչ եղան Պօէրներու հռչակաւոր թնդանօթ-
ները :

Բրէթօրիաէն Սքանսարս ի կը գրեն թէ
Լորտ Ռօպըրթս և իր սպայակոյտը Բրէթօ-
րիայ գարձած են : Մարաշխտը կը կարծէ
թէ՛ անխոհեմութիւն է իր հաղորդակցու-
թեան գիծերը տարածել հարաւային նա-
հանգներուն մէջ , կատարեալ խաղաղացու-
մէն առաջ :

Միւս կողմէն Տէյլի Գրօնիլի Բրէթօ-
րիա թղթակիցը կ'ըսէ թէ՛ զօրավար Պէյտն
Բօուէլ պաշարուած է Պօէրներէն Ռիւս-
թէնպուրկի մէջ և թէ՛ իրեն օգնութեան
դացող Հիքման գնդապետը ստիպուել է
Բրէթօրիա գառնալ :

ՊՕԹԱ 20ՐԱՎԱՐՆ Ի ՄԱՇԱՏՏՏՏՐՅ . —
« Գէյի Արկիւս » ի Լօրէնսօ Մարքեզի թղ-
թակիցը կը հեռագրէ թէ՛ զօրավար Պօթա
և իր սպայակոյտը Մաշատտօթի հասած
են և թէ Պօէրները պատնէշներ կը շինեն
քաղաքին հիւսիւսային և հարաւային կող-
մի բլուրներուն վրայ :

Գրիւկէշ նախագահը և գործադիր ժո-
ղովոյ անդամները Ուօթըրվալ մեկնած են ,
սպարապետին տուած խորհուրդին վրայ :

Միւսոյն թղթակիցը կը պատմէ թէ՛
Գուբը Անգլիացին որ մահուան դատապար-
տուած էր Տէլիօայի գծին վրայի Մակտա-
լինի կամուրջը օդը հանած ըլլալուն համար
ամսոյս 6 ին հրացանի բռնուած է ի Մա-
շատտօթի : Մերժած է իր մեղսակիցներուն
անունը տալ , մինչև որ Պօէրները իրեն
կեանքը չ'չնորհէին , ստոնք մերժած են :

ՊԱՂԻԱՑԻ ՄՊԱՅ ՄԸ ԳԵՐԻ ԲԻՆՈՒԱԾ .

— Տեղակալ Կալօքօ որ Պօէրներուն հետ կը
կուռէր և որ միւսոյն ժամանակ Մաթէն
լրագրին թղթակիցն էր , գերի բռնուած և
զրկուած է կամ ի Ս . հեղինէ և կամ ի
Սէյլա՛ :

ՌՈՒՍ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԸ . — Նօյոս վրէժիա
կը ծանուցանէ թէ՛ մ'արածօք Թրանսվալէն
Ռուսիայ գարձած է ինքզինքը զարմանե-
լու համար , Հարաւային Ափրիկէի մէջ սը-
տացած ծանր վերքերէն :

Վէլլըպուա-Մարեօլ գնդապետին մահ-  
ուանէն յետոյ, կ'ընէ Ռուս թերթը, օտար  
Լեզուներն հրահանատարութիւնը վատահու-  
ցաւ Մարտիմօֆին, որ իր պաշտօնը վարելոյ  
ամենամեծ ճարտիպութեամբ և քաջու-  
թեամբ և որուն շնորհիւ ապացոյցներն են  
իր ստացած բաշխութիւն վէրքերը:

Ամերիկայի մօտ պատերազմի մը մէջ  
սրունքէն գնդակ մը ընդունեցաւ. հազիւ  
առողջացած՝ Թապանչու գնաց, ուր 45 Եւ-  
րոպացիներով և 150 Պօլոններով Անգլիա-  
ցիները վանեց ամենազօրաւոր գիրքէ մը,  
206 հոգի սպաննելով և վիրաւորելով,  
հոտ ալ ծանրապէս վիրաւորուեցաւ. բուն-  
քին, ակնակն և ուսին գնդակ դարձ էր.  
ուրիշ մ'ալ ձախ աղբիւր ծակած էր:

Սակայն և այնպէս ատոնցմէ ալ ազա-  
տեցաւ և մասնակցեցաւ Քրօնշտատի մօ-  
տեցը մղուած կռիւներուն. բայց այլ ևս  
ուժասպառ լինելով ստիպուեցաւ Ռուսիա  
գառնալ, հակառակ Մայիս 20 ին վեց Պօլոն  
Իօմանտներու ըրած հրահրին, որ զինքը  
իրենց կիսարածի զօրովարը անուանած  
էին:

Տեղակալ Մարտիմօֆ արդէն Ռուս-  
կան բանակին մէջ ալ յայտնի եղած էր իր  
քաջութիւններովը:

**Հեղձանի վիճակն ԱՆՈՒԹԻԻՆ**

ՈՒՐԱԹ	10	ՕԿՈՍՏՈՍ	1900
173	7296	2128	8911
4844	9423	6044	6486
205	7375	9685	7584
4922	6268	1662	4248
3416	6822	9039	5671
5098	8925	2639	820
		9153	

**ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ**  
**ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅՐՈՒՆ**

Մերունի Տիար Ս. Ֆէրէկեանի վերո-  
յիշեալ հեղինակութեան ԵՐՐՈՄԻ ֆօրման  
ալ հրատարակուած է:  
Բաժանորդագրուելու փափաքողք,  
ինչպէս արդէն ծանուցուած է, կրնան գի-  
մել «Արշալոյս» ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱ-  
ՐԱՆԸ. ուր հեղինակը կը գտնուի կէս  
օրէ վերջ ժամը 5-7:

**ՀԱՒԱՔԱԾՈՅ**

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՄ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐՔՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտ-  
ներու աշակցութեամբ եռաձայն և քառա-  
ձայն պատրաստուած սոյն հաւաքածոյն  
գնել փափաքողներն կամ բաժանորդագր-  
ուիլ ուղղուեն, կրնան գիմել՝ Արշալոյս ի  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօ-  
րէին:

Տիար Ս. Հայկունի աստի ուղեւորե-  
լուն պատճառաւ, իւր հրատարակած «Վա-  
րագոյր Մարգարիտի կենաց» գրքին սե-  
կաւթիւ օրինակներն յանձնած է Արշա-  
լոյսի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ: Գնել փա-  
փաքողք կրնան հոն գիմել:

Գանի մը օրինակ մէկ անգամէն գնու-  
ղին 20 առ հարիւր զեղլ կը լինի:

պարտքիս ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

**ՆՈՐԱԿՈՒՄ**

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ  
«ԱՐՇԱԼՈՅՍ»

Հիմնադր. 1 ՄԱՅԻՄ 1900

**ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԶԲԸ**

Օտանկի ղեկարանին ղիմաշի փոքրիկ մէջ.

Տարածը ըստ պիտի ըլլայ ամեն օր, առ-  
ւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր  
և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ,  
կ'ընդունուին:

Այցեխարտեր, Երգարտիկներ, Գիտեր,  
Հրախարտեր, Մահապղներ, Տեղեկագիրներ,  
Կանոնագիրներ, Տոններ և այլ և այլ ժամա-  
նակահան յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտահաշիւներ և  
չափաւոր զին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՍԻ ԵՆ:

**ԿՈՊԵՌՊԵՆԼԵԱՆ**

ԵՒ ԸՆԿԵՐ.

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆԱՐՁԱՏՈՒՆ

Տաներկու տարիներ շարունակ կարեւոր  
լուսնկարգաւորներու մէջ աշխատելով,  
արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած և  
փորձառութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ Ապտուլլահ եղբայր ասն,  
ինչպէս և ուրիշ մի քանի ծանօթ տուններու,  
քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան  
գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը  
վարած, այժմ առանձին գործատեղի մը  
կը հիմնէ Էօզպէֆ իյէ Եսրխա Կամաշ Օթէլ.  
ՆԵՒԵՐՏՈՒ ճիշտ գիմաց թիւ 3 արարթըմնիին  
երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լաւա-  
նկարներ, ինչպէս և գուրքը կուսիներ  
ի հարկին:

Ակրանսիանս ընական մեծութեամբ:  
Կենդանագիրներ ամերիկեան մեքենայով  
որոնք երբէք չ'են աւրուիր:

Գունաւոր լուսնկարներ ամեն մե-  
ծութեամբ ընական գոյներով միմեարիւր:

Իւզաներկ և ջրաներկ պատկերներ և ըն-  
Լուսնկարի և պատկերահանութեան  
վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ըն-  
դունի յարող, սեփեղքընաւ եւ ըն:

Իրեն գիմաց յաճախորդներն հանել տուած  
լուսնկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր  
մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ:

**Տ Հ Ի Մ Ի Չ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ց**  
**Կ Ե Ն Ա Ց Ա Պ Ա Յ Ո Վ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ն**

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ՎԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՇԵԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեան բնուէն կը բաժնէ ամե-  
նէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեան բնուէն արդէն վճարած  
է կամ ինչպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ  
480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր  
և է ընտրութեան մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԵՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ  
Իրահիրէ

**ՏՈՐՓ. Ա. Յ. ՔԵՐԵՍՈՒԹԻԱՆ**

Ի Եսրխա Գոր-Պէր, թիւ 20

Իր ՁԻԻ խորհրդակցութիւնները ասկից  
վերջը, միայն ուրբաթ օրերը կես օրէ առաջ  
ժամը (ը. ե.) 9էն 11 սրտած ըլլալով կը  
խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտու-  
թիւն իրեն գիմել ուղղ աղքատ հիւանդ-  
ներու:

**Գ Ա Ֆ Է Ս Օ Ք Ա**

Տիգրան Կոտանեան պատիւ ունի ծանուցա-  
նել Արգոյ հասարակութեան թէ՛ վերջերս  
սկսած է իւր Փաղար-Մուրի խանութին մէջ  
պատրաստել ԵՆՄԵՆԻ ստրճին ամենաընտր-  
և անխարդախ տեսակէն իրեն գիմաց յաճա-  
խորդներ օխան 16 զրջ ողջի հաշուով, զուտ  
բաժն պիտի կրնան գնել կշռոյ մէջ ալ ուղ-  
ղամտութիւն գտնելով:

**Գ Ր Ք Բ Ո Ր Գ Ո Ղ Ն Յ Ր Ո Ւ Ն**

Գահիրէի և շրջակայից գրասէր Հայ հա-  
սարակութեան գիւրութիւն մը տալու մտօք՝  
կը ծանուցուի թէ Հայերէն ալեւ գիրք,  
(Իստական, Գարոցական, Գիտական, Գրական  
Արտեսական, Բանասիրական, Վիպական  
եւ այլն) որ հրատարակուած են և կը հրա-  
տարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆ-  
լիզ, Վենետիկ և Վիեննա, կարելի է գիրա-  
մատչելի պայմաններով ձեռք բերել՝ գի-  
մելով Տիար Կ. Նաւատարգեանի, Գալտեան  
վարժարան Հայոց ի Գահիրէ:

**ՏՕՔԲ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ**

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՏԱՐԱՐՈՑԻ  
Ակսիկ Եւմեմ Բուպրի թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-  
սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ  
սկուաներ:

Կը գաղթեցնէ վայրկենապէս ակուպի  
ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթոտով իւր  
պատրաստած գեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե-  
սակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած սկուաններուն տոկոսու-  
թիւնն առ նուազն երկու տարուան հառար  
կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ճրի գարմանում,  
ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ըն-  
կերութեան աւելի երաշխաւորութիւններ,  
ընդարձակ դործառնութիւններ և հրապա-  
րակի վրայ աւելի ապահովագրութիւններ  
ունի և աւելի ապահովագրին կը գտնուէ:

ԱԼԷԳՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործա-  
կատար ՄԱՂԵՔԱՆԳՐԻԱ: